

ԱՆՆԱ ՀԱՎՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ,
 ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի օգնական

**ԴԱՏԱԿԱՆ ՆԱԽԱՊԵՊԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ,
 ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ ՏԱՐԲԵՐ
 ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ**

Ներկայումս դատական նախադեպը իրավունքի հիմնական աղբյուրներից է ընդհանուր (անգլյոսաքսոնական) իրավական համակարգում (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Կանադա և այլ երկրներ)¹ և աշխարհի գրեթե մեկ երրորդը ղեկավարվում է Անգլիայի իրավունքի համակարգում ձևավորված սկզբունքներով: Նշված համակարգի երկրներում դատական նախադեպը ենթակա է պարտադիր կիրառման, և նախադեպային իրավունքի պահանջներին խստիվ հետևելու՝ դատավորների պարտականությունը բխում է մի շարք ձևական իրավաբանական աղբյուրներից:

Ռոմանագերմանական իրավական համակարգի երկրները, օրինակ՝ Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան, Իսպանիան և մյուսները, չեն ընդունել ընդհանուր իրավունքին բնորոշող այս սկզբունքները, քանի որ Եվրոպայի մայրցամաքային երկրների իրավական համակարգերը հիմնված են հռոմեական իրավունքի վրա:

Այսպես. Ամերիկյան հայտնի իրավաբանական բառարանում նախադեպ բառը բացատրվում է որպես դատարանի կողմից կոնկրետ գործով առաջին անգամ հաստատված իրավունքի գերակայություն, որն այնուհետև՝ նույնանման գործերով որոշումներ կայացնելիս, դառնում է վերաբերելի²: Գերմանիայի իրավական համակարգում նախադեպը սովորաբար հասկացվում է որպես յուրաքանչյուր նախորդ դատական որոշում՝ որոշակի առնչություն ունե-

ցող տվյալ պահին քննվող գործի հետ³: Իսպանիայում նախադեպը սովորաբար հասկացվում է որպես նախորդ դատական որոշում, որը դատարաններին պարտավորեցնում է հետևել իրեն՝ հետագայում նմանատիպ այլ գործեր քննելիս և որոշումներ կայացնելիս: Այս ըմբռնումը շատ մոտ է նախադեպի դասական հասկացությանը՝ ձևավորված ընդհանուր իրավունքի համակարգում: Սակայն, ի տարբերություն ընդհանուր իրավունքի համակարգի երկրների, Իսպանիայում գոյություն ունի մեկ կարևոր վերապահում, որն իրենից ներկայացնում է Իսպանիայի Սահմանադրական դատարանի կողմից բազմաթիվ անգամ հաստատված սկզբունք, ըստ որի՝ դատավորը ղեկավարվում է օրենքով և ոչ նախադեպով: Հետևաբար՝ դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր այստեղ ունի երկրորդական նշանակություն: Իսկ Իտալիայի Վճռաբեկ դատարանի շնորհիվ վճռաբեկության կարգով անցած ցանկացած դատական որոշում կարող է դառնալ դատական նախադեպ և կիրառվել մյուս դատավորների կողմից⁴:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր տարբեր երկրներում ընկալվում և կիրառվում է տարբեր կերպ: Սակայն իրականում ընդհանուր իրավունքի և ռոմանագերմանական իրավունքի համակարգերի մեթոդները զգալիորեն նույնացվում են⁵, ուստի դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր միաժա-

1. Մանրամասն տե՛ս **Cross R. and Harris J.**, Precedent in English Law, Fourth Edition, Clarendon Press-Oxford, 2004:
 2. Տե՛ս Black's Law Dictionary, 5th ed., 1979, էջ 1059:
 3. Տե՛ս **Марченко М. Н.**, Особенности судебного прецедента в системе романо-германского права, Государство и право, 2006, էջ 22:
 4. Տե՛ս **Ралько В. В.**, Особенности интеграционного процесса и общий вектор модернизации российской правовой системы, Нотариальный вестник, 2010, էջ 34-35:
 5. Տե՛ս **Богдановская И.Ю.**, Судебный прецедент и его эволюция // Законность, 2007, էջ 5:

մանակ հանդիսանում է տարբեր իրավական ընտանիքների ինտեգրման միջոց: Ներկայումս մայրցամաքային իրավական ընտանիքի երկրներում, որտեղ իրավունքի հիմնական աղբյուրը նորմատիվ իրավական ակտն է, մեծանում է դատական նախադեպի՝ որպես իրավունքի աղբյուրի նշանակությունը, դերը և կիրառումը, իսկ ընդհանուր իրավունքի երկրներում, որտեղ իրավունքի հիմնական աղբյուրը դատական նախադեպն է, ուժեղանում է նորմատիվ իրավական ակտերի՝ օրենքների, ստատուտների դերը և կիրառումը. հետևաբար՝ նման պայմաններում կարելի է եզրահանգել, որ նշված իրավական համակարգերի զարգացման արդի պայմաններում առավել ինտենսիվ է դառնում դրանց ինտեգրման գործընթացը, որը պայմանավորված է նաև միջազգային հարաբերությունների սրընթաց զարգացումով:

Նախադեպային իրավունքի պատմատեսական վերլուծությունը ցույց է տալիս, որ այս երևույթը հեշտությամբ փոփոխվում է և հարմարվում կոնկրետ ժամանակաշրջանի պայմաններին՝ միաժամանակ պահպանելով իր արդիականությունը, ինչի հիմքով դատական նախադեպն իր բնույթով հանդիսանում է դինամիկ երևույթ: Մշտապես փոփոխվող հասարակական կյանքին և հարաբերություններին համընթաց փոփոխվում են նաև դատական նախադեպերը: Մինչդեռ, օրենքների կամ այլ նորմատիվ իրավական ակտերի և նախադեպերի համեմատության արդյունքում պետք է փաստել, որ նախադեպերն իրենց բնույթով ավելի դինամիկ երևույթ են, քան օրենքները կամ այլ նորմատիվ իրավական ակտերը: Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջիններիս ընդունումը և դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարելը պահանջում է երկարատև և բարդ գործընթաց, մինչդեռ նախադեպերը ձևավորվում են դատարանի կողմից որոշում կայացնելու հետևանքով, ինչը համեմատաբար ավելի կարճ ժամանակ է պահանջում: Թեպետև հասարակական պահանջներից է բխում գործող օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելը, այնուամենայնիվ հարկ է հատուկ ուշադրության արժանացնել երկրի իրավական հա-

մակարգի կայունությունը, որի տեսանկյունից մշտապես կատարվող փոփոխությունները չեն կարող ողջունելի համարվել, և նման պայմաններում դատական նախադեպը կարող է դրական դերակատարություն ունենալ:

Բացի վերոնշյալը, կարելի է ընդգծել, որ արդի ժամանակաշրջանում իրավունքի տեսության մեջ գոյություն չունի միասնական մոտեցում նախադեպի հասկացության շուրջ, և այդ հարցի վերաբերյալ արտահայտվել են տարբեր տեսակետներ՝ այդ թվում բացասական կարծիքներ: Օրինակ՝ մասնագետներից ոմանք համարում են, որ նախադեպային իրավունքը չափազանց դժվար է, շփոթեցնող ու հակասական. այն թույլ է տալիս, որ դատարանն իրականացնի իրավաստեղծ գործառույթ, ինչպես համապատասխան օրենքի բացակայության, այնպես էլ առկայության պարագայում⁶:

Այս կապակցությամբ հարկ է առանձնացնել դատական նախադեպին բնորոշ հատկանիշները: Դատական նախադեպը մարդկային բանականության, ճկուն տրամաբանության, օրենքի իմացության, իրավաբանական մտածողության և դատական պրակտիկայի վերլուծության, ինչպես նաև իրավաբանորեն հիմնավորված բարդ և երկարատև ստեղծագործ աշխատանքի (ստեղծագործական ընթացակարգի) արդյունք է:

Ըստ որոշ մասնագետների՝ դատական նախադեպը պետք է հասկացվի որպես ամենաբարձր աստիճանի դատարանի կողմից կոնկրետ գործով կայացված որոշում, որը համարվում է դատական նախադեպ և պետք է կիրառվի ինչպես տվյալ, այնպես էլ մյուս դատարանների դատավորների կողմից⁷: Սակայն ցանկացած պարագայում դատական նախադեպն ստեղծվում է միայն դատական իշխանության և, մասնավորապես, բարձր դատական աստիճանների կողմից, այսինքն՝ դատական նախադեպն իր բնույթով դատական գործունեության արդյունք է: Դատական նախադեպի ստեղծման գործընթացը պահանջում է որոշակի իրավական ընթացակարգի պահպանում՝ ինչպես, օրինակ, անհրաժեշտ է, որպեսզի դատարան ներկայացված լինի հայցադիմում, վճռի դեմ ներկայացված լինի վերաքննիչ բողոք

6. Տե՛ս Головистикова А. Н., Дмитриев Ю. А., Теория государства и права: учебник. М. Юрайт, 2005, էջ 356:

7. Տե՛ս Подольская Н. А., К вопросу о понятии прецедента как источника права (общетеоретический аспект), Судебная практика как источник права. 2000, էջ 152:

և այսպես շարունակ: Դատական նախադեպը գրավոր փաստաթուղթ է և այդ իսկ պատճառով նրան բնորոշում են իրավաբանական փաստաթղթերի և ակտերի բոլոր հատկանիշները: Դատական նախադեպերի միջոցով կատարվում է օրենքի դատական մեկնաբանություն, որն ունի պաշտոնական բնույթ: Ավելին, դատական նախադեպն ունի նորմատիվ բնույթ⁸, վերջինիս կատարումն ապահովված ու երաշխավորված է պետական հարկադրությամբ. բացի այդ, դատական նախադեպն անմիջականորեն կապված է նյութական և դատավարական իրավունքի նորմերի կիրառմամբ: Դատական նախադեպը իրավասահմանող (իրավահաստատող) գործառույթ է իրականացնում, այսինքն՝ ընդունում է նոր իրավադրույթ (իրավադրույթներ), որով հետագայում այլ դատարանները պետք է դեկլարարվեն նմանատիպ բազում գործերի լուծման ժամանակ: Հակառակ դեպքում անհրաժեշտ են պատշաճ հիմնավորումներ: Համամատչելիության և դատական

գործունեության թափանցիկության ապահովման նպատակով դատական նախադեպը պաշտոնապես հրապարակվում է:

Թեև իրավունքի տեսության մեջ ընդունված է, որ նախադեպը, որպես կանոն, ձևավորվում է մի քանի որոշումների հետևանքով⁹, այնուամենայնիվ, հարկ է փաստել, որ նախադեպը կարող է ձևավորվել նաև մեկ որոշմամբ, ինչը պայմանավորված է նրանով, որ որոշման մեջ ներկայացված իրավական դիրքորոշումը կամ դրույթը դառնում է կիրառման ենթակա հենց որոշման օրինական ուժի մեջ մտնելու պահից սկսած, հետևաբար, օրինական ուժի մեջ մտնելու պահն անմիջականորեն կապված է որոշման՝ նախադեպային բնույթ ձեռք բերելու հետ: Այսինքն՝ դատական որոշումը, ըստ այդմ՝ դրանում բովանդակվող նոր իրավական դիրքորոշումը ձեռք է բերում նախադեպի կարգավիճակ այն պահից սկսած, երբ տվյալ որոշումը մտնում է օրինական ուժի մեջ, այլ ոչ դրանից հետո մի քանի որոշումների կայացման

8. Տե՛ս **Марченко М. Н.**, Судебный прецедент: разнообразие понятий и многообразие форм проявления, Журнал российского права, 2006, էջ 96:

9. Այն մասին, որ դատական նախադեպը, որպես կանոն, ձևավորվում է մի քանի որոշումների հետևանքով, գրվել է Rupert Cross-ի և James Harris-ի «Precedent in English Law» գրքի երրորդ՝ «Stare decisis» և չորրորդ՝ «Exceptions to stare decisis» գլուխներում:

Այս մասին պնդել են նաև ԱՄՆ-ում XX դարի ընթացքում հիմնադրված ռեալիստների դպրոցի ներկայացուցիչները, որոնցից, օրինակ, հայտնի իրավաբան գիտնական Karl Llewellyn-ը իր 1967 թվականի «Jurisprudence: Realism in Theory and Practice» աշխատության 56-րդ էջում նշել է, որ տարբեր որոշումների համադրման գործընթացում ի հայտ է գալիս այն ընդհանուր կանոնը՝ նախադեպը, որը պետք է զարգացնել:

Այս մասին գրել է նաև И. Ю. Богдановская-ն իր «Эволюция судебного прецедента в общем праве» տպագրված հոդվածում, մասնավորապես՝ 77-րդ էջում, որտեղ գրել է, որ նախադեպը, որպես կանոն, ձևավորվում է մի քանի որոշումների միջոցով: Նույն միտքը արտահայտել է իր դոկտորական ատենախոսության մեջ:

И. Ю. Богдановская-ն այս մասին գրել է նաև Մոսկվայում Наука ամսագրում 1993 թվականին հրատարակված իր «Прецедентное право» գրքի 15-րդ և 18-րդ էջերում, մասնավորապես նշել է հետևյալը՝ նախադեպը ոչ միայն ստեղծվում է մի քանի դատական որոշումներով, ըստ էության, դրանց ձևավորում են բարձրագույն դատական ատյանները:

Այս մասին գրել են նաև իրավաբանական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Н. А. Гущина-ն և М. С. Глухоедов-ը իրենց՝ 2013 թվականին Մոսկվայում տպագրված «Судебный прецедент в российской правовой системе: история, теория, практика» հոդվածում /էջ 79-ից 85/, որտեղ նշվել է հետևյալը՝ ընդհանուր իրավունքի երկրների իրավական դոկտրինում ավանդաբար ենթադրվում է, որ դատական նախադեպը ստեղծվում է մի քանի դատական որոշումներով: Այս մասին գրել է Jim Evans-ը իր 1987 թվականի Орефорդի Clarendon ամսագրում տպագրված «Change in the doctrine of precedent during the nineteenth century» գրքի 39-րդ էջում, որտեղ նշվել է հետևյալը՝ որոշ հանգամանքների դեպքում դատավորներն իրավասու են ուղղակիորեն դիմել արդարադատությանը կամ հիմնավորմանը՝ որպես ընդհանուր իրավունքի երկրի իրավունքի աղբյուրի, նույնիսկ եթե այն կանոնը, որը նրանք օգտագործել են, դեռևս համընդհանուր կերպով չի ճանաչվել դատական այլ գործերում:

Այս մասին գրվել է նաև Neil Duxbury-ի Cambridge համալսարանի տպագրության 2008 թվականին հրատարակված «The Nature and Authority of Precedent» գրքի 2-րդ գլխի 1-ին ենթագլխի՝ նախադեպի դոկտրինի ձևավորումը վերտառության ներքո:

Այս կապակցությամբ Անգլիայում 1880 թվականին Re Hallett's Estate-ի թիվ 13-696 գործով լորդ Jessel-ը հայտնել է հետևյալ միտքը՝ հարկ է չմոռանալ, որ ընդհանուր իրավունքի կանոնները պետք է հաստատված լինեն հնագույն ժամանակներից ի վեր:

Կարելի է հավելել նաև, որ պրետորների էդիկտները նույնպես իրենց նշանակությունը ձեռք են բերել հաջորդականության և կրկնության շնորհիվ, ինչն էլ ընդունված է անվանել՝ edictum tralatitium:

և նոր իրավական դիրքորոշման կիրառման հետևանքով: Այս պարագայում որոշիչ դեր է կատարում որոշման բնույթը, բովանդակությունը, ազդեցիկ ուժը, այդ որոշումը կայացրած դատարանի դիրքը և այլն, սակայն ոչ գործնականում նման որոշումների կրկնության հանգամանքը:

Հարկ է հիշատակել, որ դատական նախադեպը, նախևառաջ, հանդիսանում է արդարադատության արդյունք և որպես այդպիսին՝ կոնկրետ վեճը լուծող իրավական ակտ: Այդ որոշումը ձեռք է բերում պարտադիր բնույթով կապ գործով կողմերի համար օրինական ուժի մեջ մտնելու պահից սկսած, ուստիև այդ պահից այն կարող է փաստացիորեն համարվել նախադեպ:

Ավելին, դատական նախադեպը երբեք չի կարող կորցնել իր ուժը, այլ պարզապես կարող է դադարել կիրառվել դատական պրակտիկայում այն պատճառաբանությամբ, որ հանդիսանում է դատական որոշում, որով լուծվել է կոնկրետ անձանց միջև ծագած իրավական վեճը. այն շարունակում է ունենալ իրավական ուժ և պարտադիր լինել գործով կողմերի համար: Նույնիսկ այն դեպքում, երբ նախադեպային որոշում կայացրած դատարանը հանգի հետևության, որ նախադեպային որոշմամբ արձանագրված իրավական դիրքորոշումն այլևս արդիական չէ և նոր նախադեպային որոշմամբ փոփոխի այն, ապա երկու որոշումներն էլ կարող են համարվել նախադեպային, իսկ հետագայում, իրավական դիրքորոշման կիրառման նպատակով դրանցից որևէ մեկի ընտրության հարցը կարող է վերապահվել նմանատիպ այլ գործ քննող դատարանին: Այսինքն, դատական նախադեպը կարող է դադարել կիրառվել դատական պրակտիկայում նոր նախադեպային որոշմամբ ավելի հիմնավոր լուծում ստանալու արդյունքում, քանի որ դատարանի կողմից նախադեպային որոշման կիրառման ժամանակ նախապատվությունը կտրվի գործի՝ ավելի հիմնավոր և պատճառաբանված, ինչպես նաև առավել արդիական որոշմանը: Սակայն ցանկացած պարագայում կիրառման նպատակով նախադեպային որոշման ընտրության հարցը որոշում է դատարանը՝ իր հայեցողությամբ:

Որպես օրինակ կարելի է ներկայացնել

հետևյալ իրողությունը. ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0137/04/13 սնանկության գործով 18.07.2014 թվականին կայացրած որոշմամբ գտել է, որ այն դեպքում, երբ պարտատերն, ի հիմնավորումն վճարային պարտավորության անվիճելիության, վկայակոչում է օրինական ուժի մեջ մտած վճիռը և նշում, որ այն գտնվում է հարկադիր կատարման փուլում. միաժամանակ պետք է հիմնավորի հարուցված կատարողական վարույթի՝ իր համար բացասական ելքը, այն է՝ կատարողական վարույթն ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով կամ կասեցվել է նույն օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ կետի հիմքով: Իսկ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը թիվ ԵՇԴ/0020/04/14 սնանկության գործով գտել է, որ պարտապանի վճարային պարտավորությունն անվիճելի է, քանի որ այն ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով, ինչն ուղակիորեն բխում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի բովանդակությունից: Ինչ վերաբերում է պարտատիրոջ համար հարուցված կատարողական վարույթի՝ բացասական ելքի հիմնավորմանը, ապա կատարողական վարույթի ավարտը՝ այդ թվում պարտապանի գտնվելու վայրը պարզելու անհնարինության հիմքով, ինքնին հանդիսանում է բացասական ելք պարտատիրոջ համար, քանի որ այն չի հանգեցնում որևէ իրավական հետևանքների: Մասնավորապես, հարուցված վարույթն անհայտ ժամանակահատվածով մնում է անարդյունք: Այս կապակցությամբ մեկ այլ՝ թիվ ԱԲԴ/0115/04/16 սնանկության գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն արձանագրել է, որ պարտատիրոջ համար հարուցված կատարողական վարույթի բացասական ելքի հիմնավորման հանգամանքը չի կարող դրվել պարտապանի՝ սնանկ ճանաչվելու պահանջի մերժման հիմքում: Նշված պրակտիկան ամրապնդվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում: Այս ամենից հետևում է, որ միևնույն հարցի վերաբերյալ դատական պրակտիկայում արտահայտվել են հակասական իրավական դիրքորոշումներ, ուստի այսուհետ առաջին ատյանի դատարաններն իրենց հայեցողությամբ կարող են վեճը լուծել կամ ՀՀ Վճռաբեկ դատարանի, կամ ՀՀ

վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ վերը նշված դիրքորոշմանը համապատասխան:

Այնպիսի իրավական համակարգում, որտեղ դատական նախադեպը կատարում է նախևառաջ մեկնաբանող գործառույթ և ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, նախադեպային որոշումը կարող է դադարել կիրառվել համապատասխան օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի փոփոխության կամ նորի ընդունման հետևանքով հնի դադարեցման ժամանակ: Այնուամենայնիվ, դրա մեջ ներկայացված իրավական դիրքորոշումը, կատարված մեկնաբանությունները և եզրահանգումները շարունակում են որոշակի արժեք ունենալ նույնանման փաստական հանգամանքներով՝ այլ գործի լուծման համար:

Վերոգրյալից հետևում է, որ բարձր դատական ատյանների կողմից կայացված ցանկացած դատական որոշում, որով տվյալ դատարանը հայտնել է նոր իրավական դիրքորոշում, ըստ էության, կարող է համարվել դատական նախադեպ և դառնալ կիրառման ենթակա հետագայում նմանատիպ փաստական հանգամանքներով այլ գործեր քննելիս:

Դատական նախադեպին բնորոշ վերոնշյալ հատկանիշներին անհրաժեշտ է ավելացնել նաև վերջիններիս դրական և հարաբերականորեն բացասական կողմերը: Դատական նախադեպի դրական հատկանիշներն են կանխատեսելիությունը, որոշակիությունը, իրավական բացերի լրացումը և երկիմաստությունների վերացումը, միասնական դատական պրակտիկայի ձևավորումը, օրենքների՝ միատեսակ կիրառության ապահովումը, իրավական մշակույթի զարգացումը, օրենսդրության կատարելագործումը, իրավակիրառ պրակտիկայի բարելավումը, նոր իրավադրույթների հաստատման եղանակով նորմատիվ կարգավորում չունեցող իրավական վեճերի լուծումը և այլն: Նախադեպի ինստիտուտը կապված է նաև բարձր իրավագիտակցության և իրավական մշակույթի հետ, ուստիև այն որոշակիորեն ազդում է նաև երկրի ընդհանուր և իրավական զարգացվածության վրա: Հենց նախադեպային իրավունքն է առավելագույն կերպով նպաստում իրավունքի զարգացմանը և երաշխավորում օրենքների միատեսակ կիրառությունը: Հատկանշական է նաև, որ նախադեպի ինստիտուտը

զգալիորեն թեթևացնում է դատարանների գործունեությունը, որոնց իրավունք է վերապահված դատական գործերի քննությունն ավարտելով՝ գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս հղում կատարել նմանատիպ գործերով պրակտիկայում առկա դատական նախադեպերին: Այս հանգամանքը վկայում է նախադեպի ինստիտուտի դրական ազդեցության և իրականության մեջ դրա կարևորության մասին:

Իրավունքի տեսության մեջ արտահայտվել է նաև այն կարծիքը, ըստ որի՝ նախադեպային իրավունքը նկատելի ազդեցություն է թողնում իշխանությունների տարանջատման սկզբունքի վրա:

Այսպես՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունների տարանջատումը՝ որպես հիմնարար սահմանադրական սկզբունք, ենթադրում է միասնական պետական իշխանության բաժանում երեք՝ հարաբերականորեն ինքնուրույն իշխանությունների՝ օրենսդիր, գործադիր և դատական, որտեղ օրենսդիր իշխանությանը վերապահված է օրինաստեղծ գործունեությունը, իսկ գործադիր իշխանությունն զբաղվում է ենթաօրինաստեղծ գործունեությամբ: Նման պայմաններում, երբ երեք՝ հարաբերականորեն ինքնուրույն իշխանություններից երկուսն իրականացնում են, համապատասխանաբար, օրինաստեղծ և ենթաօրինաստեղծ գործունեություն, ապա ակնհայտ է, որ երրորդ՝ դատական իշխանության կողմից իրավաստեղծ գործունեության իրականացումը չի կարող որևէ կերպ հակասել կամ բացասական ազդեցություն թողնել իշխանությունների տարանջատման սկզբունքի վրա: Ավելին, այն կարող է նպաստել երեք իշխանությունների՝ առավել արդյունավետ, հավասարակշիռ և հակակշիռ գործունեությանը: Նշվածը կարող է իրականացվել հենց բարձր ատյանի դատարանների կողմից նախադեպային որոշումների կայացման միջոցով:

Բացի վերոգրյալը, հարկ է ընդգծել, որ մայրցամաքային իրավունքի երկրներում առաջնային տեղ է զբաղեցնում օրինաստեղծ գործունեությունը, և դատական նախադեպերը որևէ կերպ չեն կարող գերակայել օրենքներին կամ այլ նորմատիվ իրավական ակտերին, քանի որ առավելապես հանդես են գալիս այս կամ այն իրավական դրույթների մեկնաբա-

նության տեսքով: Այսպիսով, կոնկրետ անձանց միջև ծագած վեճը կարգավորելիս դատարանը դատական նախադեպի միջոցով մեկնաբանում է գործող օրենսդրության իրավանորմերը և բացահայտում դրանց հարաբերակցությունը, պարզաբանում այդ իրավանորմերի կիրառման ձևերը և այլն, ինչը նախադեպի առանձնահատկություններից է: Նշվածը վերաբերում է նաև Հայաստանի Հանրապետության իրավական համակարգին, որտեղ դատարանները չեն սահմանում նոր իրավադրույթներ՝ վարքագծի համապարտադիր կանոններ, այլ մեկնաբանում են կոնկրետ գործով կիրառման ենթակա իրավունքի նորմերը: Այսինքն, այս առումով ներպետական իրավական համակարգում դատական նախադեպերը տարբերվում են դատական նախադեպի՝ դասական հասկացությունից:

Միաժամանակ, որոշ հեղինակներ գտնում են, որ դատական նախադեպը որոշակիորեն սահմանափակում է դատարանների ինքնուրույնությունը և դատավորի՝ ազատ հայեցողության իրավունքը: Այս կապակցությամբ կարևոր է ընդգծել, որ դատական նախադեպն ինքնին՝ որպես իրավակիրառ կամ իրավաստեղծ ակտ, հանդիսանում է դատական

ազատ հայեցողության արդյունք: Դատարանն օրենքի շրջանակներում իր հայեցողությամբ է որոշում կայացնում նախադեպային դիրքորոշումը կիրառելու կամ չկիրառելու հարցերի շուրջ՝ կախված քննվող գործի լուծման համար այդ դիրքորոշման անհրաժեշտության աստիճանից և հաշվի առնելով գործի բոլոր փաստական հանգամանքներն ու առանձնահատկությունները: Բացի այդ, դատարանը, կիրառելով որևիցե նախադեպային որոշում, կարող է ներկայացնել լրացուցիչ պատճառաբանություններ ու հիմնավորումներ, դրանով իսկ ավելի զարգացնել նախադեպային որոշմամբ սահմանված իրավական դիրքորոշումը: Նման պայմաններում կարելի է հետևություն կատարել, որ դատական նախադեպը չի սահմանափակում ինչպես դատարանների ինքնուրույնությունը, այնպես էլ դատավորի՝ ազատ հայեցողության իրավունքը:

Իհարկե, վերը շարադրվածը նախադեպի ընդհանուր հատկանիշների և հատկությունների սպառիչ ցանկը չէ, բայց այն հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմել այս իրավական երևույթի բնույթի ու առանձնահատկությունների մասին:



ԱՆՆԱ ՀԱՎՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ
 ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի օգնական

ԴԱՏԱԿԱՆ ՆԱԽԱՂԵԿԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ, ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ ՏԱՐԲԵՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ

Սույն գիտական հոդվածում ներկայացվում են դատական նախադեպի հասկացության վերաբերյալ առկա պատկերացումները տարբեր իրավական համակարգերում: Նկարագրվում են դատական նախադեպի հիմնական առանձնահատկությունները, դրա դրական և հարաբերականորեն թեր կողմերը: Մատնանշվում է, որ դատական նախադեպը, հանդիսանալով դինամիկ երևույթ, մշտապես պահպանում է իր արդիականությունը և որոշակիորեն նպաստում է նաև տարբեր իրավական համակարգերի ինտեգրման ինտենսիվ գործընթացին: Նախադեպի հետ կապված տարբեր հիմնահարցերի վերլուծության արդյունքում հետևություն է արվում, որ դատական նախադեպը կարող է ձևավորվել նաև մեկ որոշմամբ և այն չի կարող կորցնել իր ուժը, այլ պարզապես կարող է դադարել կիրառվել դատական պրակտիկայում: Բացի այդ, ընդգծվում է, որ բարձր դատական աստիճանների կողմից հայտնաձև ցանկացած նոր իրավական դիրքորոշում, ըստ էության, կարող է համարվել նախադեպ և կիրառվել մյուս դատարանների կողմից: Իսկ այս կամ այն նախադեպային որոշման կիրառման հարցը վերապահվում է գործը քննող դատարանին:

Բանալի բառեր. դատարան, դատական նախադեպ, դատական որոշում, իրավական դիրքորոշում, իրավական մեկնաբանություն, իրավունքի աղբյուր:

АННА АКОБЯН

Соискатель в институте философии, социологии и права НАН РА
 Помощник судьи в гражданском апелляционном суде РА

ЮРИДИЧЕСКАЯ ПРИРОДА, ОСОБЕННОСТИ И ПОЛОЖИТЕЛЬНЫЕ СТОРОНЫ СУДЕБНОГО ПРЕЦЕДЕНТА В РАЗЛИЧНЫХ ПРАВОВЫХ СИСТЕМАХ

В сей научной статье преподносятся существующие представления относительно понятия судебного прецедента в разных правовых системах. Описываются основные особенности судебного прецедента, его положительные и относительно несовершенные стороны. Указывается, что являясь динамичным явлением, судебный прецедент постоянно сохраняет свою актуальность, а также в некоторой степени способствует интенсивному процессу интегрирования разных правовых систем. В результате анализа различных ключевых вопросов, связанных с прецедентом, делается вывод, что судебный прецедент может сформироваться и одним решением и что он не может потерять свою силу, а может просто перестать применяться в судебной практике. Кроме этого, подчеркивается, что любая новая правовая позиция высших судебных инстанций по существу может считаться прецедентом и применяться другими судами. А вопрос применения того или иного прецедентного решения предоставляется изучающему дело суду.

Ключевые слова: суд, судебный прецедент, судебное решение, правовая позиция, правовое толкование, источник права.

ANNA HAKOBYAN

Institute of Philosophy, Sociology and Law, NAS RA, applicant
 Judge's assistant in the Civil Court of Appeal of the RA

THE JURIDICAL NATURE, FEATURES AND POSITIVE ASPECTS OF JUDICIAL PRECEDENT IN DIFFERENT LEGAL SYSTEMS

This scientific article presents the existing notions of the concept of judicial precedent in different legal systems. The main features of the judicial precedent, its positive and relatively imperfect sides are described. It is indicated that as a dynamic phenomenon, the judicial precedent always maintains its relevance, and also to some extent contributes to the intensive process of integration of different legal systems. As a result of the analysis of various issues related to the precedent, it is concluded that the judicial precedent can also be formed by one decision and that it can't lose its strength, it can simply cease to be applied in judicial practice. In addition, it is emphasized that any new legal position expressed by the higher courts may in essence be considered a precedent and be applied by other courts. And the question of applying any precedent is left to the court examining the case.

Keywords: court, judicial precedent, judicial decision, legal position, legal interpretation, source of law.